

## Մ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 23-ին տեսուչ Սարդսեանը վերջացրել էր նախապատրաստական բոլոր գործերը ուսումնարանը ժամանակին բանալու մասին: Մնում էր որ նրա կազմած ուսուցչական խումբը հաստատուի Խորհրդից: Թէկ արդէն օգոստոսի վերջն էր մօտենում, բայց առաջնորդը չէր յօժարւում թոյլ տալ որ հոգաբարձութեան հին կազմը հաստատի ուսուցչական նոր խումբը: Այն ժամանակ օգոստոսի 23-ին տեսուչը հեռագրով դիմեց Կաթողիկոսին որ թոյլ տրուի հին հոգաբարձութեան հաստատել խումբը և սկսել զբաղմունքները: Էջմիածնում եղած դաշնակցական շէֆերը վեհարանի կամարիլլայի վրայ աղդելով շատագեցրին հաստատել տալ «նորընտիր» հոգաբարձուներին: Այդ հաստատութեան դէմ բողոքել էր Անանով: Հաստատուածներին հեռագրուեց դեռ պաշտօնի չհրաւիրել: Այդպիսով թէ էջմիածնի և թէ թեմական առաջնորդի վարանոտ և փոփոխական ընթացքը հնարաւորութիւն չտուին ժամանակին կարգադրել գործերը՝ նոր հոգաբարձուների հաստատութեան դէմ Ա. Անանեանի բողոքներն էլ միւս կողմից ձգձգեցին բացումը մինչև հասաւ Սեպտեմբերի 10-ը, երբ պէտքէ կայանար առաջին նիստը նոր հոգաբարձուների հետ: Այդ պարոնները տեսնելով որ այդ օրը իրանցից մէկը բացակայ է—չեն գալիս նիստի և առաջնորդը յարգում է այդ կապրիզը, նորից հրաւէր է ուղարկում Սեպտեմբերի 14-ին: Առաջնորդը մինչև սեպտ. 25 չի ստորագրում այդ նիստի արձանագրութիւնը և այդպիսով զրկում է տեսչին հնարաւորութիւնից հրաւիրել խումբը: Այնուհետև անցած դարձածը Դաշնակցութեան սխրագործութիւնների նոր ասպարէզ դարձած Յովհանան ուսումնարանում պարզում են հետևեալ գրութիւններից:

—  
Կրից կուրացածներ

Արդի դաշնակցական շէֆերին կարծեմ Յովհանան ուսումնարանում իմ տեսչութեան խնդիրը աւելի է զբաղեցնում քան հայոց հարցը: Վըէժինորութիւնը մթնացը է դըրանց մէջ առ-

ողջ դատողութիւնը և ահա դրանց հաւատարմատար փաստաբանը, պ. Տիգրան Յովհաննիսեանը, կաշուից դուրս է գալիս ամեն տեսակ կենացներով շահած լինելու դաշնակցական բիւրօկրատների այդ «դատը»:

Ես իրաւաբան չեմ, սակայն հաւատացած եմ, որ ամեն մի գիտութիւն պիտի հիմուած լինի նախ և առաջ առողջամտութեան օրէնքների վրայ: Առողջամտութիւնը և արդարութեան սկզբունքը ղեկավար ունինալով ես պայքար եմ սկսել այդ պարոնների դէմ առհասարարակ և Յովհաննեան պարոցի հարցում մասնաւորապէս: Դրանց գեմագօգիսական մանեօվլները բայլ առ քայլ ես մերկացրել եմ և վերջը, նեղն ընկած, դրանք իրանց ամրող յոյսը դրէլ են վեհարանի կամարիլայի վրայ ունեցած իրանց բռնի ոյժի և զանազան «հաջաթ» դիւնապետների աջակցութեան վրայ... Կատարում է այն, ինչ ի սկզբանէ անտի սովորական է եղել էջմիածնի մթնոլորտում...

Կրկնութիւններ չանկնու համար ես կաշխատեմ այդ ուսումնաբանի շուրջ զաշնակցական բիւրօկրատների ստեղծած կագու կոփերը վերածել մի քանի կէտերի, առաջարկելով որ մեր անաչափ իրաւաբանները յայտնեն իրանց կարծիքները և հասրակութեան համար պարզ լինի Տիգրան Յովհաննիսեանի նըման «փաստաբանների» իսկական պատկերը:

1) Նախընթաց հոգաբարձութիւնը օրինական կազմ ունէր և իր պաշտօնավարութեան առաջին եռամեակը գեռ չէր լրացրել, երբ որոշել էր ուսուցչական խմբի փոփոխութիւններ կատարել յունիսի 15. ին կայացած իր նիստում: Հոգաբարձական 7 անդամներից ներկայ 5 հոգին միաձայն որոշումներ կայացնելով՝ ընծայագրի և ոչ մի կէտը չէին խախտում, որովհետև նրանում ոչ մի ցուցում չը կայ այն մասին, թէ հոգաբարձութեան որոշումները պիտի կայանային անպատճառ 7 անդամների մասնակցութեամբ: Ոչ մի ցուցում չը կայ, որի մէջ որևէ տարբերութիւն դրուած լինէր մնայուն (3) և ընտրովի (4) անդամների ձայների մէջ:

2) Մողնու ծխականների բողոքը պիտի ուղղուած լինէր հոգեր իշխանութեան դէմ, որ ի նկատի ունենալով անպատճ ժամանակը (գեկտեմբեր), առաջին եռամեակի համար հին հոգաբարձուններին հաստատելուց բացի նաև երկարել էր նրանց պաշտօնավարութիւնը նոր եռամեակով: Այդ կարգադրութեան երկրորդ մասը (երկարացումը) միայն կարող էր բողոքի նիւթ լինել: Ինքը հոգաբարձութիւնը այդ կարգադրութեան մէջ յանցանք չունի. նա պարտաւոր էր շաբունակել իր պաշտօնը, մինչև որ նրան յաջորդող մարմինը չէր գալ փոխարինելու նրան:

3) Հին հոգաբարձութեան յաջորդող մարմինը (նոր հոգաբարձուները) միայն սեպտեմբերի 14-ին են ստանձնել իրանց պաշտօնը և նրանք ոչ մի իրաւունք չունեն քմահաճօրէն անվաւեր համարել հին հոգաբարձութեան որոշումները: Այդ ապօրինութեան հարցը քննող պիտի լինի այլ ինստանցիա և ոչ շահագրգռուած կամ քինախնդրութեամբ դեկավարուող նոր հոգաբարձութիւնը:

4) Օգոստոսի 10-ին առաջնորդարանում հաւաքուած պատուիրակներին ծիսականները ընտրելու էին միմիայն 4 հոգաբարձուներ ընտրելու համար և ոչ մի մանդատ նրանց չէին տուել: Պատուիրակները կարող էին զանազան ցանկութիւններ կամ desiderata-ներ յայտնել, ինչպէս յայտնել են ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների ժամանակ: Արդ՝ ներսիսեան դպրոցի հոգաբարձու պ. Տիգրան Յովհաննիսեանը ձգտում է այդ մանդատները իրագործել ներսիսեան դպրոցում իրը իմպերատիվներ այնպէս, ինչպէս նա անում է Յովհաննեան դպրոցում:

5) Մանդատները ապագայի մասին ցանկութիւններ, հրահանգներ են: Հարց է թէ՝ կարող են մանդատներով վճռուել իրաւաբանական հարցեր, խախտուել ուրիշների օրինական իրաւունքները: Ես կարծում եմ թէ՝ ոչ, իսկ իրաւաբան Տիգրան Յովհաննիսեանը կարծում է թէ այս:

6) Եթէ հաստատման մի կօնդակը իրաւական նշանակութիւն ունի նոր հոգաբարձուների նկատմամբ, չը նայած նրանց ընտրութիւններին ամբողջ կեղծիքին, չը նայած որ այդ ընտրութիւններին մասնակցել են իրաւասու ծիսականների  $2\frac{1}{2}\%$  միայն, ինչու երեք կօնդակները կորցնում են իրանց զօրութիւնը հէնց միայն այն պատճառով, որ օգոստոսի 10-ին պ. Մուշահածն կարդաց բիւրօի թելադրած «ի նկատի ունենալով մները»:

7) Կօնդակ տուող մարմինը պէտք է հասկանայ թէ թէնչ է անում, և կամարիլայի կամ կողմնակի անձանց սպառնալիքի տակ նա իրաւունք չունի իր մի կօնդակին զօրութիւն տալ, իսկ միւսին՝ ոչ, եթէ չէ ուզում ողորմելի դործիք լինել մի խումբ բիւրօկրատների ձեռքում, որ վեհարանական կամարիլայի հետ բլոկ է կազմիլ:

8) Նախկին հոգաբարձուները յունիսի կիսում կայացրել են վճիռներ առաջիկայ ուսումնական տարուայ վերաբերեալ, որովհետեւ այն իշխանութիւնը, որ պիտի նշանակէր նոր ընտրութիւններ, մինչ այդ ժամանակ ոչ մի կարգադրութիւն չէր արել նոր ընտրութիւնների մասին: Խսկ ով կուրացած չէ դաշ-

նակցական ըիւրօկրատների պէս, նու պէտք է հասկանայ, որ ուսուցչական կազմի, մանաւանդ տեսչի հարցը պէտք է լուծել ոչ սեպտեմբեր-հոկտեմբեր ամսում, այլ մայիս-յունիս: Այդ պարզ ճշմարտութիւնը ընդգծել է և այն դպրոցական ժամանակի դիմանքը, որ պէտք է հաստատէր էջմիածնի Կիևարօնական ժողովը: (Յօդ. 1<sup>2</sup>, ծան. 1):

9) Եթէ, օրինակ, քաղաքային դումայի ձայնաւորների ժամանակամիջոցը լրանում է, միթէ նրանք պէտք է բարձի թողի անեն ընթացիկ գործերը, որովհետև ձև Տ. Յովհաննիսեան և Ընկ. մտածող մարդիկ կը դանու են, որոնք յետոյ քմահաճօրէն ապօրէն կը ճանաչեն այդ ձայնաւորների բոլոր որոշումները և օրինաւոր կերպով պաշտօնի հրաւիրուած մարդկանց կարող են անձնական կապրիզով առանց օրինաւոր պատճառաբանութեան հեռացնել: Բացի այդ, միթէ ձայնաւորներն են պատասխանատու, եթէ ժամանակին նոր ընտարութիւններ չեն նշանակում այն իշխանութիւնը, որին տրուած է այդ իռաւունքը:

10) Արդեօք ամեն մի նոր հոգաբարձութիւն իրաւունք ունի քմահաճօրէն փոխել նախկին հոգաբարձութեան օրինական որոշումները, յենուելով իրաւական ոչ մի արժէք չունեցող «ժանդատների» վրայ:

11) Օրինաւոր հոգաբարձութիւնը միաձայն ինձ ընտրել է տեսուչ յունիսի 15-ին: Կտակով պահանջած իշխանութիւնը (Կաթողիկոսը) ինձ հաստատել է պաշտօնի մէջ: Կտակով տեսուչը Խորհրդի անդամ է և միւս անդամների հետ հաւասար ձայն ունի: Ուսումնարանի խորհրդի կանօնաւոր նիստում ինձ յանձնուած է եղել գործադրել իմ իրաւունքը—ուսուցչական խումբ կազմել և առաջարկել ի հաստատութիւն հոգաբարձութեան՝ և ես այդ կատարել եմ: Բայց սեպտեմբերի 14-ի նիստում, որին առաջին անգամ են մասնակցում նոր անդամները, ուղում են, որ իրանց կապրիզը, հիմնուած պլ. Մուչչահաճէի ինչ որ «ի նկատի ունենալովների» վրայ, օրէնք ճանաչուի: Հարց է: օգոստոսի 10-ի 9 դաշնակցական պատուիրակների մանդատով կարդի են վերացրւած համարուել նախկին հոգաբարձութեան օրինաւոր որոշումները և Կաթողիկոսի հաստատութիւնը բեկանուել:

12) Արդ դաշնակցական իրաւագէտների կարծիքով, եթէ Կաթողիկոսը կօնդակով հաստատել է իրանց (նոր հոգաբարձուներին), ուրեմն (!?) հաստատել է և նրանց ընտրողների մանդատները: Փաստաբան Տիգրան Յավիշանիսեանի այդ տարօրինակ լոգիկայով ուրեմն ներսիսեան դպրոցի ներկայ հո-

դարարձութիւնը, որի անդամներից մէկն էլ ինքն է, պէտք է արդէն ընդունուած համարի այն բոլոր մանդատները, որոնք տրուած էին Ներսիսեան դպրոցի հոգարարձութեան ընտրողների ժողովներում: Բայց այդ մանդատները այնտեղ լոկ ցցան-կութիւններ» են համարւում, իսկ այստեղ «օրէնքներ», «իմպե-րատիվներ», որովհետև այդ է պահանջում «ժողովրդի իրա-ւունք» խօսքերը շահագործող փարիսեցիների շահը: Եթէ ընտ-րողների մանդատներով իրաւական չափեր որոշուէին, էլ ի՞նչ հարկ կը լիներ Պետական Դումա կամ օրէնսդրական որևէ մարմին: «Ժողովրդի կամքը» ներկայացնող մի քանի ընտրող-ներ, ունենալով իրաւասուների 3 0/0-ի հաւանութիւնը (ինչ-պէս Յովինաննան ուսումնարանի հոգարարձական ընտրութիւնները), կարող են զանազան ափեղ-ցփեխ ցանկութիւններ յայտնել, որոնք և օրէնք կը ճանաչուեն:

13) Յովինաննան ուսումնարանի տեսուչը ընտրուած է կանո-նաւոր հոգարարձական նիստում՝ և հաստատուած կաթողիկոսից, և մինչև որ նոյն կարգով նու չը հրաժարեցնուի, նա կա-տարեալ իրաւունք ունի օգտուել իր ձայնից և իրաւուն-քից: Նոր հոգարարձուները, եթէ կամենում են սեպտեմբեր ամսում: Նոր տեսուչ ընտրել, պէտք է պատճառաբանուած հարց դնեն եղածին հեռացնելու մասին, անկախ օգոստոսի 10-ին թայֆայական անհիմ մանդատից, որ իրաւական ոչ մի նշանակութիւն չունի և լոկ արտայայտում է ազգային բիւ-րոի կրքից կորրացած բաղձանքը և. Սարգսեանի նկատմամբ: Իսկ մինչև չըրուի օրինական կարգով, հին հոգարարձութեան կողմից ընտրուածը շարունակում է վարել իր պաշտօնը և ու-րեմն, իրաւունք ունի ձայն տալու ուսուցչական խմբի ցուցա-կը քննելիս, Պարզ է ոչ-կոյրերի համար:

Առա կէտեր, որոնց հիման վրայ ես սիանդամայն իրաւացի և կօրրեկտ եմ համարում իմ բոնած դիրքը Յովինաննան ու-սումնարանի տեսչական հարցում: Թող անաշաս և ձեռնհաս մի միջնորդ գատարան գտնէ թէ իրաւացին և կօրրէկտը պ. Տիգ-րան Յովինաննիսեան և Ընկերութիւնն է: Իբրև այդպիսի դա-տաւորներ ես առաջարկում եմ իմ կողմից իրաւարաններ՝ պ. պ. Արշակ Բարխուդարեանին, Յովինաննէս Սպինդիարեա-նին, Սամսոն Յարութիւննեանին և Յովինաննէս Սաղաթելեանին: Եթէ պ. Տիգրան Յովինաննիսեանը և իր ընկերները համաձայն չեն այդ առաջարկած ցուցակին՝ կարող են ընտրել իրանց կողմից ևս նոյնքան իրաւարաններ: Այդ իրաւարանները քննե-լով ամբողջ գործը՝ աւելի ձեռնահաս են հարցը լուծել, քան ազգային բիւրօն կամ նրա դաշնակից Վեհարանի կամարիլ-

իան։ Ո՞ր կողմը արդարացի ճանաչուի այդ դատարանի կողմից, թող այն կողմը մնայ իր պաշտօնի մէջ, իսկ հակառակ կողմը թող հեռանայ և դրանով դպրոցը ազատուի անտեղի մրցութիւնից։ Բոնութիւնով, «ժողովը բարդական ձայն» խօսքերի դեմագօգիական մանեօվըներով և ծակ փաստարանութեամբ հասարակական հարցեր վճռելու ձևերը ժամանակ է մի կողմ նետել, և յարգելով ճշմարտութիւնը և արդարութիւնը՝ մանել հասարակական ասպարէզ։

Դատաւորները թող ուրիշները լինեն և ոչ շահագրգուռած կողմերը։ Երկու օր ժամանակ հմ տալիս (յօդուածը լոյս տեսնելու օրից սկսած) ընդունելու իմ առաջարկը։ Մերժման դէպքում պիտի պարզ լինի բոլորի համար, թէ կուլտուրականութիւնը ինչպէս են հասկանում մեր դաշնակցական աղահոգարձուները…

(«Մշակ» № 203)

### I. Սարգսեան

Սեպտեմբերի 16-ին

Եջմիածնից՝ Կաթողիկոսը թեմիս առաջնորդին Յովլանեան ուսումնարանի գործի առիթով ուղարկել է հետեւեալ հեռագիրը։ «Թէն տեսուչը և հոգաբարձունը հաստատուած էին իմ կոնդակներով, սակայն դժբաղդաբար իմ խրատները ոչ մի ազդեցութիւն չտնեցան, նրանք ուսումնարանը դարձրին պայքարի ասպարէզ, ուստի խուսափելով չափազանց աննախատեսելի և ֆլասսակար, դպրոցի գոյութեան համար, հետեւանքներից և անսախորժ բարդութիւններից,—առաջարկում եմ ուսումնարանի և ուսանողների բարօրութեան համար խորհուրդ տալ տեսչին հրաժարուել, տալով նրան տարեկան ոռմիկու»

Այդ առաջարկին կեռն Սարգսեանը պատասխանել է այսպէս։

«Կարդալով Նորին Վեհափառութեան հեռագիրը, որով Ն. Վ. բարեհաճում է առաջարկել ինձ, ի նկատի ունենալով ուսանողների օգուտը, ստանալ տարեկան ոռմիկու և հրաժարուել տեսչական պաշտօնից, պատիւ սննիմ յայտնելու հետեւեալը. գործի հետ ծանօթ բոլոր անաշառ մարդկանց յայտնի է, թէ Յովլանեան ուսումնարանի հարցում որ կողմն է դպրոցը դարձրել կուսակցական պայքարի և դերիշանութեան ասպարէզ։ Բարձր հոգեոր իշխանութեանը, եթէ ուզում էր վերականգնել անդորրութիւնը դպրոցում, պէտք է անյոդդողդ պաշտպան հանդիսանար օրինականութեան և չզոհէր անհատին՝ կազմա-

Կերպութեան։ Զիջում անել ակներև քինախնդրութեան և բըռնութեան, ես համարում եմ վոքրհոգութիւն իմ կողմից։ Միակ արդար ճանապարհը լուծելու կնճիռը՝ այն միջոցն է, որ ես առաջարկել եմ, հրապարակապէս («Մշակ» № 203), այն է. իրաւաբաններից կաղմած մի միջնորդ դատարանի յանձնել գործը։ Թող հեռանայ դպրոցից այն կողմը, որը անիրաւացի կը ճանաչուի։

### Ակնյայտնի ապօրինութիւն

Մ. Յովնանեան դպրոցի հարցը հետզհետէ բարդում է։ Էջմիածինը, կամ, աւելի ճիշտն ասած, կուսակցական և ինտորիգան մի դիւանապետի կուսակցական ոտոր շահերին զոհ բերուած և նրա ձեռքում խաղալիք դարձած Ամենայն Հայոց կաթողիկոսական իշխանութիւնը, ոտնակոխ անելով ամեն օրինականութիւնն, սաքիավելեան բոլոր յատկութիւններով օժտուած կարգադրութիւններ և տնօրինութիւններ է ։ անում։

Մենք գիտենք, որ Թիֆլիզից էջմիածին է գնացել դադասողի գործողների մի ամբողջ վոհմակ, որ թե ու թիկունք ունենալով ապիկար և ապաշնորհ, նախկին Շնոր-Դարս-ական, Ներսէս վարդապետ Մելքո-Թանգեանցին, կանգ չէ առնում ոչ մի միջոցի առաջ ճնշումն գործ դնելու զառամեալ ու հիւանդ կաթողիկոսի վրայ։ Եւ իբրև հետևանք այդ գաղտադողի ճընշումների, հետգհետէ ստացում են հեռագիրներ, որոնք ցոյց են տալիս, թէ էջմիածինը մոռացել է ամեն բարեխսդութիւն, չափ ու սահման և կատարեաչ փաշայական կամայականութեամբ վտանգում է դպրոցի շահերը ի հաճոյս մի քանի անհատների, արհամարհելով օրինականութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն։

Մենք գիտենք, որ կաթողիկոսի անունից մի քանի օր առաջ հեռագիր եկաւ առաջնորդին, խորհուրդ տալ տեսուչ լ. Սարգսեանին հրաժարական տալ, քանի որ կաթողիկոսի բոլոր յորդուները և հայրական խրատները ապարդին են անցնում։ Այդ ապօրինի և անարդար առաջարկին, լ. Սարգսեան խիստ արժանապատութեամբ պատասխանեց, որ ասպարէզից պէտք է հեռանայ նա, ով մեղաւոր է, ով դպրոցը դարձրել է կուսակցական ստոր կրքերի ասպարէզ։

Թւում էր, թէ էջմիածնի կամարիլան և թայֆայական դիւանապետը կը սթափուէին և յետ կը կանգնէին կաթողիկոսին նոր և անպատուարեր կարգադրութիւններ անել տալուց։ Բայց վոհմակը՝ յանձին մի քանի բախտախնդիրների, որոշել Հոկտեմբեր, 1906.

էր ոչ մի անարժան միջոցի առաջ կանգ չառնել։ Երկու օր առաջ հասնում է մի նոր հեռագիր—գումարել հոգաբարձական ժողով առանց տեսչի և կարգադրել դպրոցի գործերը։

Պարզ է, որ սրանով սեսուչը արձակուած պէտք է համարել, թէև ուղղակի արձակման կօնքակ չէ տրուած։ Կարգադրութիւնը որքան էլ մաքիավելեան, բայց շատ էլ դժուար ըմբռնելի չէ։ Երբ հոգաբարձական նիստերին չմասնակցէ տեսուչը, դաշնակցական հոգաբարձուները մեծամասնութիւն կազմելով, կը կարգադրեն ամեն բան։ Եւ տեսուչը, առանց պաշտօնապէս արձակուած լինելու, կը հեռանայ ասպարէզից։

Էջմիածինը շատ լաւ տեսնում է և իմասնում, որ չը կայ ոչ մի օրինական հիմք, ոչ մի պատճառաբանութիւն արձակելու տեսչին։ Նա չէ կամենում արդարութեան պաշտպան հանդիսանալ, դատապարտել մեղաւոր կողմը և կանգնել օրինականութեան հողի վրա։ Նա զոհում է ճշմարտութիւնը։ Վայր է ձըգում կաթողիկոսական պատիւը։ Նա ոտնակոխ է անուն ու ըէնքը։

Եւ Ներսէս Թանգեանների պէս ինտրիգանները դեռ երկար կը շարժնակեն իրանց ինտրիգները, դեռ երկար կը զոհեն օրէնքի, խղճի, արդարութեան շահերը, քանի որ մեր անտարբեր հասարակութիւնը, ինտելիգենցիան իր լուսութեամբ կը խրախուսէ մակարոյժներին և բախտախմնդիրներին։ Հասարակութիւնը պէտք է իր հոգոր ըողոքի ձայնը բարձրացնէ։ Պէտք է զգացնել տայ, որ ոչ միայն Մէլիք-Թանգհաններին, այլ և ոչ ոքի, ով էլ լինի նա, թոյլ չի տայ ոտնակոխ անել օրէնքը, արդարութիւնը և ճշմարտութիւնը։

Հ. Ա.

### Խող հասարակութիւնը դատի

Իմ առաջարկը՝ Յովհաննեան օր. ուսումնաբանում իմ և «ազգային բիւրօիսանշանակած նոր հոգաբարձուների մէջ ծագած տարածայնութիւնները յանձնել իրաւարաններից կաղմուած միջնորդ դատարանի ընսութեան՝ մնաց անպատասխան։ Նոր հոգաբարձուների լիդեր պ. Տ. Յովհաննիսեանը իր լնկերների հետ անշուշտ կարիք չեն զգում միջնորդ դատարանի դիմնլու, քանի որ վեհաբանի կամարիլան և հաջաթ դիւանապետները, ինչպէս և կաղմակերպութեան բռնի միջոցները իրանց նմանների ձեռքումն է, իսկ իրանց դէվիզն է՝ «Նպատակը արդարացնում է միջոցները»։ Պէտք է խեղդի հասարակութեան մէջ քննադատական ողին և հրու հնազանդութիւն տուաջ բերել—մտածում են իրանց դիբքի պահպանութեան մասին հոգացող

մեր խանգոտ բիւրօկրատները: Եւ ահա մի կողմից նրանք բարեհաճում են ֆավօրիտիզմ ցոյց տալ, պաշտօններ բաժանելով այն բոլոր սինլըոր տիրացուներին, որոնք համակերպւում են և խնկարիում իրանց, իսկ միւս կողմից յայտարարում են վայռենի և անմիտ հալածանք նրանց դէմ, որոնք «աներիս համարձակութիւն» ունեն ոչ միայն չրաժանել այդ ազգային թշուառութեան պատճառ բիւրօկրատների յոոի սկզբունքները, սիստեմը և գործելակերպը, այլ և՝ քննադատել նրանց արարքները: «Քննադատել»:—Ի՞նչ յանդգնութիւն: Այդ է մեր իրականութիւնը: Եւ այդպիսի ասիական փաշայականութիւն ստեղծող պյեղափոխականները առանց կարմրելու հաւատացնում են միամիտներին, թէ իրանք տարրեր հն ոռւս և թիւրք բիւրօկրատներից, մինչդեռ անարօգիսան, նմանութիւնը սրանց հետ ուղղակի ապշեցուցիչ է նոյնիսկ մանրամասնութիւնների մէջ: Ճակատագրի հեղնութիւն չէ այդ, բայց էլ ի՞նչ է, խղճուկ հայիր:

### Հ. Սարգսնան

Մեր դպրոցակական տարեգրութեան մէջ մի տիսուր էջ բացող այդ գէպքի մանրամասնութիւնների արձանագրութիւնը կարևոր համարելով, տալիս ենք մի քանի տեղեկութիւններ, որոնք պարզ ցոյց կը տան թէ էջմիածնի բարձր հոգեոր իշխանութեան և թէ մեր «ազգային բիւրօկրատիայի» գործելակերպը, բացարձակ սանձարձակ փաշայական վարժունքը և օրինակութեան, բարոյականութեան որևէ սկզբունքի բացակայութիւնը նրանց գործողութիւնների մէջ:

Ի՞նչպէս գիտենք, նախկին հոգաբարձութիւնը այն ժամանակ, երբ նա օրինաւոր պաշտօնավարութեան մէջ էր և դեռ ոչ մի կարգադրութիւն չէր եղել հոգաբարձական նոր ընտրութիւն կատարելու, ընտրեց դպրոցի տեսուչ պ. Լևոն Սարգսնանին: Այս ընտրութիւնը Կաթողիկոսը հաստատեց կոնդակով և, բացի դրանից, նա առանձին կոնդակ ևս ուղարկեց հոգաբարձութեան՝ շնորհաւորելով նրա կատարած աջող ընտրութիւնը: Դրանից յետոյ միայն կատարուեց 4 նոր հոգաբարձուների ընտրութիւնը: Դժբախտաբար զպրոցի և հայ ժողովրդի համար, շնորհիւ ծխականների տնտարբերութեան, Բեթղեհէմի եկեղեցու 18 ծխականների ժողովով ընտրուած պատուիրակների քուէներով գաշնակցական բիւրօկրատները կարողացան ընտրել տալ իրանց թեկնածուներին: Եւ միանդամից, որ հոգաբարձութեան կազմի մէջ կարողացան մտնել Տ. Յովհաննիսեանի և ըն-

կերների պէս հոգաբարձուներ, պէտք էր սպասել, որ դպրոցի խաղաղ կեանքը կընդհատուի, որ նա ոսպարէզ կը դառնայ կուսակցական նեղ կրքերի, որ մատաղ սերնդի շահերը կը մոռացուեն: Այդպէս էլ եղաւ:

Եւ ճշմարիտ, այնուևետև ինչ որ անցաւ Յովսանեան դպրոցում, ինչ կարգադրութիւններ որ եղան թէ Տաճատ և Ներսէս վարդապետների պէս ինստրիվան դիւնապէտների կողմից, բայց կաթողիկոսական անունով քօղարկուած, և թէ իրանց Հոգաբարձուների կողմից, այդ կարգադրութիւնները կրում են «Թայֆայական» բնաւորութիւն:

Սկզբում, Կաթողիկոսի անունից խորհուրդ տրուեց Լամարգսեանին հրաժարուել, բայց նոյն խորհուրդը չտրուեց, ի հարկէ, այն հոգաբարձուներին, որոնք գործում էին ապօրինութիւն: Երբ ոչ-արժանավայել խորհուրդը չլսուեց, Կաթողիկոսի անունից եկաւ այսպիսի հեռագիր:

«Թիֆլիս, առաջնորդ Սաթունեան արքեպիսկոպոսին.

«Որովհետև իմ բոլոր յորդորները զուր անցան, ուստի գումարեցէք հոգաբարձական նիստ, առանց տեսչի, և ձեռնարկեցէք դպրոցի բացման»:

Այդ հեռագրին՝ առաջնորդը պատստիանում է, թէ այդ առաջարկը անհասկանալի է, որովհետև ինչպէս կարելի հոգաբարձական նիստ գումարել առանց տեսչի, երբ տեսուչը իր պաշտօնի մէջ է և կտակի համաձայն նա պէտք է մասնակցէ նիստին: Այդ կարգադրութեան դէմ բողոքում է և մշտական հոգաբարձու ու Յովսանեան ցեղի ներկայացուցիչ պ.Ալէք. Անանեանը:

Եւ ահա էջմիածնից ստացւում է հետևեալ երկրորդ հեռագիրը առաջնորդի անունով.

«Հեռագիրը պարզ էր. դումարել նիստ միայն հոգաբարձուներից և լուծել բոլոր վիճելի հարցերը տեսչի և ուսուցիչների վերաբերմբ»:

Պարզ է, որ էջմիածինը, շատ լաւ իմանալով, որ տեսչի բացակայութեամբ՝ դաշնակցական հոգաբարձուները մեծամասնութիւն կը կազմեն, և որովհետև նրանք իրանց գործողութիւնների մէջ սովոր են ղեկավարուել ոչ մի օրէնքով, ուստի անմիջապէս կը հեռացնեն տեսչին, նոր տեսուչ կընտրեն և էջմիածնին էլ այն ժամանակ ինքն չքմեղ կը հանդիսանայ, ասելով՝ «Ինչ անեմ, հոգաբարձութիւնն է արձակել»:

Եւ ահա առանց որևէ պատճառի, առանց որևէ յանցանքի, այն աեսուչը, որ գես 2 ամիս առաջ կաթողիկոսական կօնդակով հոչտկում էր ամենաարժանաւորը, այժմ հեռացնեում

Է պաշտօնից, և այն րոպէին, երբ արդէն ուսուցչական խումբ  
է կազմուած և ուսումը պէտք է վաղուց սկսուէր:

Մեզ կասին, այդպէս է կաթողիկոսի կամքը: Բայց հօ չէ  
կարելի ամեն մի կամայականութիւն, հրէշտառ ապօրինու-  
թիւն արդարացնել կաթողիկոսական կոնդակով:

Եւ այդ է պատճառը, որ հասարակութեան մէջ սաստիկ յու-  
զմունը է տիրում: Հասարակութիւնը չէ կարող չյուզուել, որով-  
հետեւ գէպը շատ վրդովեցուցիչ է: Եւ արդէն բողոքներ սկսել  
են կազմակերպուել: Այսօր բերումնք այդ բողոքներից մինը:

Նրանք, որոնց համար թանգ են մայենի դպրոցի և մա-  
տադ սերնդի շահն. արդարութեան, ճշմարտութեան և օրինակա-  
նութեան շահները: Որոնք դատապարտում են բոնութիւնը, կա-  
մայականութիւնը և մեր դպրոցական, հասարակական հիմնար-  
կութիւնների բարգաւաճումը տեսնում են միայն օրինակա-  
նութեան մէջ, պէտք է միացնեն իրանց բողոքների \*) ձայները  
արդէն հնչուած ձայնի հետ:

Պէտք է զգացնել տալ էջմիածնին և «ազգային բիւրօկ-  
րատներին», որ չի կարելի անպատիժ կերպով ունակոխ անել  
օրինականութիւնը և արդարութիւնը:

Հ. Ա.

Նորին Վեհափառութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց:  
Էջմիածին.

Համաձայն Զեր Վեհափառութեան հեռագրին, առաջնոր-  
դը, սեպտեմբերի 26-ի կէսօրին, նիստի է հրաւիրել Մ. Յով-  
նանեան դպրոցի հոգաբարձական խորհուրդը, առանց տեսչի,  
լուծելու համար տեսչի և ուսուցիչների մասին, խնդիրները,  
համարելով այս խնդիրները վիճելի: Ի նկատի ունենալով, որ  
այդ խնդիրները արդէն լուծուած են նախկին նիստերում, հո-  
գաբարձութեան օրինական կազմով և արձանագրութիւնները  
հաստապուած են, ես խնդրում եմ, խուսափելու համար սուր-  
բնդէարումներից և յանուն դպրոցի բարիքների, առաջարկել  
առաջնորդին յիտաձգել նիստը, որովհետու ես ներկայացնում  
եմ ձեզ պատճառաբանուած զեկուցագիր՝ մասնագէտ-իրաւա-  
գէտների եղրակացութեամբ տեսչի ընտրութեան լիակատար  
օրինականութեան և խորհրդի նախորդ նիստերի կանոնաւո-  
րութեան մասին:

Ա. Անանեան

\*) Բազմաթիւ բողոքները «Մշակում» մենք առաջ չննք բերում այս-  
տեղ, ինչպէս և նամակները որոնք ստացուել են մեր խմբագրութեան մէջ  
դաշնակցական այդ բռնութեան առիթով:

Ծ. իմբ.

Օրագիր Մարիամնան Յովիսաննան օրիորդաց դպրոցի

Սեպտեմբերի 26-ին

Լուս ի ն. Սրբազն նախագահը բանալով ժողովը յայտնեց, թէ՝ «Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է ինձ Շրաւակիրել միմիայն հոգաբարձուներին Նիստի եւ վճռել քոլոր վիճելի հարցերը տեսչի եւ ուսուցիչների մասին», և հրահիք հոգաբարձուներին յայտնել իրանց ցանկութիւնները և ասաց. «ապագայ բարդութիւններից ուսումնարանը ազատ պահելու համար անհրաժեշտ է անձնական զրկանքները խոնարհեցնել հասարակական շահերին և թողնել Վեհափառի մինչև այժմ եղած կարգադրութիւնները անփոփոխ, որով սխիթարուած կը լինի և Մերունի Հայրապետը և գոն կը մնայ հասարակութիւնը և ուսումնարանում այժմէն կը սկսուեն դասաւանդութիւնները, որին սպասում են հարիւրաւոր երեխաներ»:

Կար գ ա դ ը ե ց ի ն. Պ. Անսանեանցը ասաց. «Տեսուչը հաստատուել է Կաթողիկոսից և նա պէտք է մնայ տեսուչ. նոր ընտրութիւն անել ես օրինաւոր չեմ ճանաչի. իսկ ուսուցիչների մասին նոյնպէս նոր կարգադրութիւն ես չեմ ընդունում, որովհետև անցեալ մեր օրինական ժողովում հաստատել ենք ուսուցչական ցուցակը, որ ներկայացրել էր տեսուչը»:

Նախագահը կրկնեց, որ Վեհափառ Կաթողիկոսը թոյլ է տուել տեսչի և ուսուցիչների վերաբերութեան վճիռ կայացնել:

Հոգաբարձու Տիգրան Յովինաննիսեանը յայտնեց իր կարծիքը, թէ՝ «Ճեսուչն ու նորահաստատ հոգաբարձուները չեն կարող միասին պաշտօնավարել մի հաստատութեան մէջ, որովհետև պ. Սարգսեանը մեղ մինչև այսօր հոգաբարձու ճանաչել չէ կամեցել, մեր իրաւունքներն արհամարհել է և մի շարք հրապարակական վիրաւորանքներ է հասցըել մեզ, և այս այսպէս լինելով հանդերձ, ես ցանկութիւն չունեմ, որ տեսուչը վիրաւորիչ կարդով հեռացուի ուսումնարանից և ոչ էլ զրկուի ոռճիկից, այլ ես կառաջարկեմ, որ տեսուչը ինքը հրաժարական ներկայացնի մինչև ամսիս վերջին օրը և ստանայ իր ոռճիկը այնպէս, ինչպէս Վեհափառ Կաթողիկոսն է առաջարկել, իսկ եթէ չներկայացնի հրաժարական, հրաժարուած ճանաչել:

Այս առաջարկին միացան առ. Դարիա Թաղէսոսեանը, պապ. Յարութիւն Թայիրեանը և Լիպարիտ Նազարեանը:

Պ. Ալեքսանդր Անսանեանը յայտնեց. թէ՝ «Ես չեմ կարող

Ներկայ լինել այն որոշման, որ քանդում է առաջին որոշումը. ևս հեռանում եմ ժողովից»:

Կուսանաց անապատի Մայրավետը համակերպուեց Անանեանցի կարծիքին և նա նոյնպէս հեռացաւ ժողովից:

Ժողովը շարունակելով նորընտիր հոգաբարձուները, յարմար համարեցին տեսչի պաշտօնի համար հրաւիրել պ. Յակոբ Մանանդեանին. իսկ ուսուցչական կազմի մասին որոշուցին հրաւիրել նախկին խումբը մի տարի ժամանակով, բացի տեսչունուց. իսկ դասերն սկսել հոկտեմբերի 2-ից, երկուշաբթի օրից:

Դավագանը յայտնեց թէ՝ «Ես, իրեւ ստորագրեալ Վեհափառ Կաթողիկոսի, պարտաւոր էի համարում ինձ մինչև այժմ գործիքին ընթացք տալ Վեհափառ Կաթողիկոսի ցուցումներով, և այս պատճառով իրաւունք չէի համարում Հայրապետից հաստատուած տեսչի մասին խնդիր դնել. բայց այժմ նորին Վեհափառութիւնը հեռագրական պատուէր է կարդացել ինձ միմիայն հոգաբարձուներից ժողով կազմել և վիճելի հարցերի, այն է տեսչի և ուսուցչական խմբի մասին վճիռներ դընել. ևս այդ յանձնեցի հոգաբարձական ժողովի հայեցողւթեան: Գալով իմ կարծիքին, ես գտնում եմ նախկին հոգաբարձուների որոշումներն ըստ ամենայնի օրինական և հետեւալիչս ոչ մի օրինական հիմք չեմ գտնում հոգաբարձական նախկին կազմի որոշումները փոփոխութեան ենթարկել, ուստի և չեմ կարող իմ հաւանութիւնը տալ նոր տեսուչ հրաւիրելու և նախկին ուսուցչական խումբը պաշտօնի հրաւիրելու որոշմանը: Իսկ ինչ վերաբերում է Ներկայ հոգաբարձուների պատճառարանութիւններին, թէ նրանք ուսումնարանից դուրս միմեանց հրապարակական վիրաւորանքներ են պատճառել, որը ծառայում է տեսչին արձակելու շարժառիթ, այդ ևս չեմ հաւմարում ուսումնարանական գործին միացնելու ոչ մի օրինական հիմք, որովհետեւ այդ մասին կայ օրէնք, ուր զրկուած համարուածները դիմում և արդարութիւն պահանջելով պատժի են ենթարկում յանցաւորներին»:

Հոգաբարձուները յայտնեցին, թէ իրանք տեսչին ոչ մի վիրաւորանք չեն պատճառել: Վիրաւորանք պատճառողը տեսուչն է եղել:

Իսկ հոգաբարձուները անհրաժեշտ համարեց նոյն որոշման հարազատ պատճէնը տեսչի հաստատութեան յայտարարութեան հետ մատուցանել Վեհափառ Կաթողիկոսին:

## ԻՐԱՀԱԲԱՆՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Մենք ներքոյ ստորագրեալ իրաւաբաններս, ժողով-  
ուելով Յովսանեան օրիորդաց գպրոցի հոգաբարձու պ.  
Ալէքսանդր Անանեանի հրաւէրով - քննելու լիշեալ դըպ-  
րոցին վերաբերեալ մեզ առաջարկած հարցերը, որոնք  
ծագել են պ. և. Սարգսեանին տեսուչ ընտրելու առի-  
թով, եկանք հետեւեալ եզրակացութեան՝ ունենալով իր-  
քե նիւթ մեզ ներկայացրած ներկայ փաստաթղթերը.  
ա) հանգուցեալ Յով. Ստեփ. Անանեանի 1876 թուի  
ընծայագիրը, բ) Յովսանեան օրիորդաց գպրոցի խոր-  
հրդի վերջին արձանագրութիւնները և դ) խորհրդի  
նորընտիր անդամների և տեսչի հաստատութեան կա-  
թողիկոսական կօնդակները:

### Հարց

1) Որոնք են այն օրինական հիմունքները, որոն-  
ցով պէտք է ղեկավարուի Յովսանեան օրիորդաց դըպ-  
րոցի վարչութիւնը:

### Պատասխան

1) Հանգուցեալ Յովհաննէս Ստեփանեան Յովսա-  
նեանի ընծայագիրը, իբրև իրաւաբանական մի ակտ,  
պարունակում է իր մէջ որոշ ղեկավարող սկզբունքներ,  
որոնք պարապիր են ուսումնարանի վարչութեան և  
հոգեոր իշխանութեան համար. Այդ սկզբունքները—  
ներկայ խնդրին վերաբերեալ—հետեւալներն են.

ա) «Ուսումնարանը ընդմիշտ մնալով հոգեոր վար-  
չութեան մէջ, ղեկավարուում է խորհրդով, կազմուած  
տեղական թեմական արքեպիսկոպոսի նախագահութեամբ.  
Կուսանաց վանքի մայրապետից, Թիֆլիսում ապրող  
հայերից ընտրուած չորս անդամներից, որոնք հաստատ-  
ուում են Հայոց Պատրիարք կաթողիկոսից և ուսումնա-  
րանի տեսչից:

Խորհուրդը իւրաքանչիւր տարուայ սկզբում պէտք է իր միջից ընտրէ նախագահի օգնական. գործերը պէտք է վճռուեն ձայների առաւելութեամբ. անդամներին անձնական իշխանութիւն չլի վերագրուում:

բ) Խորհրդի չորս անդամները Թիֆլիսի քնակիչներից՝ մինչ ես կենդանի եմ, նշանակւում են իմ կողմից, իսկ իմ մահից յետոյ ընտրւում են, երեք տարով՝ պատգամաւորներից, որոնց այդ նպատակով ընտրում են իւրաքանչիւր անգամ թեմական եպիսկոպոսի նախօրօք կարդադրութեամբ Վանքի մայր տաճարի, Եղողնում և. Գէորգ և Աստուածածնի Բեթղեհէմի եկեղեցիների ծխականները, իւրաքանչիւր եկեղեցուց չորս հոգի:

գ) Տեսչին ընտրում է խորհուրդը հայերից, որոնք ստացել են պատշաճ կրթութիւն, և հաստատւում է պաշտօնի մէջ նոյնպէս Վեհափոռ Պատրիարքից: Տեսուը կառավարում է ուսումնական մասը յիշած խորհրդի անմիջական հսկողութեամբ:

դ) Իմ առհմի արական ճիւղի մէջ աւագագոյնը օգտւում է ուսումնարանի հոգաբարձուի կոչումով. նա Թիֆլիսում եղած ժամանակ կարող է ներկայ գտնուել խորհրդում ձայնի իրաւոնքով: Հոգաբարձուին յատկացնում է հոգալ ուսումնարանի բարօրութեան համար:

Ընծայազրի վերոյիշեալ պայմաններից պարզ երևում է, որ հանդուցեալ ընծայաբերողի և բարձրագոյն հոգևոր իշխանութեան մէջ կայացել է փոխադարձ համաձայնութիւն, որը նույնուիրաբերութիւնը ընդունելուց յետոյ — պիտի իբրև անխախտելի դաշնագիր սրբութեամբ պահպանուի և կատարուի հոգևոր վարչութեան կողմից:

### Հարց

2) Օրինաւոր է եղել նախընթաց խորհրդի կազմը և իրաւասութիւնը՝ սկսած այն ժամանակից, երբ պետական ուսումնարանական վարչութիւնը յանձնեց դըպրոցը հոգևոր կառավարութեան, մինչև խորհրդի նորընտիր անդամների պաշտօն ստանձնելը:

## Պատասխան

2) Յովիտանեան օրինրդաց դպրոցի նախընթաց խորհուրդը ունէր օրինաւոր կազմ և իրաւասութիւն՝ դպրոցական բոլոր գործերը վարելու։ Համաձայն ընծայագրի 2-րդ և 3-րդ յօդուածների, խորհրդի անդամներն են՝ նախագահութեամբ թեմական առաջնորդի կուսանաց վանքի մայրապետը, Յովիտանեանների տոհմական ճիւղի ներկայ և աւագագոյն անդամ պ. Ալէքսանդր Անանեանը, դպրոցի տեսուչը և ժողովրդից բնտրուած չորս անձինք, ընդամենը 8 հոգի՝ հաւասար իրաւունքներով։ Նախկին խորհրդում մնացել էին 5 անդամներ — մէկի մահուան և միւսի բացակայութիւն \*) պատճառով, ուստի նրանք լիակատար իրաւունք ունէին՝ համաձայն ընծայագրի — դպրոցական գործերը վարելու և որոշումներ կայացնելու։ Գալով նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցի լրանալուն, մենք զըտնում ենք, որ խորհրդի հին կազմը իրաւունք ունէր և նոյնիսկ պարտաւոր էր շարունակել իր գործունէութիւնը մինչև յաջորդ խորհրդի կազմուելը, երբ էլ դա լինէր. այդ ոկզմունքը, որ բղխում է օրէնքից և կեանքի պահանջներից, ընդունուած է պետական և հասարակական հիմնարկութիւններում։ Անկախ դրանից, մենք զըտնում ենք, որ նախընթաց խորհրդի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրանում էր միայն ներկայ թուի սեպտեմբերի 3-ին, որովհետև այդ ամսաթուին երեք տարի առաջ նրանք իրանց պաշտօնը ստանձնեցին, որ ժամանակուանից և պէտք է համարուի նրանց պաշտօնավարութեան եռամեայ շրջանը։

## Հարց

3) Օրինաւոր է խորհրդի նորընտիր չորս անդամների պահանջը, որ արձանագրուած է ներկայ սեպտեմբերի 14-ի օրագրում. այն է թէ՝ կաթողիկոսը հաստա-

\*) Այդ ժամանակ դպրոցը տեսուչ չունէր։

տելով նրանց ընտրութիւնը, հաստատել է դրանով այն յանձնարարութիւնները, որ նրանք ստացել են պատգամաւորներից:

### Պատասխան

3) Այդ պահանջը գուրկ է որևէ օրինական հիմունքներից, քանի որ ոչ պատգամաւորները իրաւունքունէին յանձնարարութիւններ տալ ընտրեալ անդամներին, որպէսզի նրանք ղեկավարուեն իրանց գործունէութեան ընթացքում այդ յանձնարարութիւններով և ոչ էլ անդամները իրաւուք ունէին ընդունելու այդ վերջինները ի գործադրութիւն:

Այն օրից, երբ նլանք պաշտօնի են հրաւիրւում, պարտաւոր են ղեկավարուել միայն դպրոցի կանօնադրութեամբ, որից գուրս իրանց հաճոյքով նրանք ոչ մի պահանջներ չեն կարող դնել ի կատարոմն:

Բացի դրանից Կաթողիկոսի հաստատման կօնդակից բնաւ չե երևում, որ Վեհափառ Հայրապետը հաստատելով նոր անդամների ընտրութիւնը, հաստատել է կամ օրինաւոր է ճանաչել և պատգամաւորական յանձնարարութիւնները: Չենք ասում արդէն, որ ծխական ժողովների արձանագրութիւններում բնաւ չը կայ յիշատակութիւն որևէ յանձնարարութիւնների մասին՝ ընտրող ժողովրդին կողմից:

### Հ ա ր ց

4) Օրինաւոր է խորհրդի նորընտիր չորս անդամների վճիռը, որ արձանագրուած է աւմսիս 26-ի օրագրում: Այդ օրագրից երևում է, որ յիշեալ անդամները որոշել են արձակուած համարել դպրոցի տեսուչ Լևոն Սարգսեանին հոկտ. 1-ից, նրա տեղ հրաւիրել նոր տեսուչ, և միաժամանակ նախընթաց խորհրդից արձակուած ուսուցչական խումբը՝ բացառութեամբ աւագ վարժուհոււ-

## Պատասխան

4) Յովսանեան դպրուի տեսուչ պ. լ. Սարգսեանը ընտրուել է դպրոցի նախկին խորհրդի օրինաւոր որոշմամբ և հաստատուել է կաթողիկոսական կոնդակով։ Հրաւիրուելով տեսչական պաշտօնի նա մտանակցել է նախկին և ներկայ խորհրդի նիստերին և ներկայացրել է խորհրդին ի հաստատութիւն ուսուցչական խմբի կազմը։ Ոչ մի պաշտօնեայ չէ կարող արձակուել իր պաշտօնից առանց օրինական և յարգելի պատճառների, ևս առաւել ներկայ դէպքում, երբ Լևոն Սարգսեանը տակաւին չէ գործակցել նորընտիր հոգաբարձութեան հետ և օրագրի մէջ չեն արձանագրուած որևէ պատճառների կողմեր նրա անցիալ մանկավարժական գործունէութիւնից։ Հետեւապէս խորհրդի նորընտիր անդամները բնաւ իրաւունք չունէին օրինաւոր ընտրուած և հաստատուած տեսչի, առանց որևէ կանոնաւոր հիմունքի, իր պաշտօնից արձակուած համարել և նրա տեղ նորն ընտրել։

Զէ կարելի օրինական հիմք ճանաչել այն պատճառաբանութիւնը, որ բերուած է ամսիս 26-ի օրագրում, քանի որ վերջինը բղիում է զուտ անձնական տրամադրութիւնից և լրազրութեան մէջ ծագած փոխադարձ պայքարից, որը ոչ մը առնչութիւն չունի ուսումնարանի հետ։ Ուստի խորհրդի նորընտիր անդամների ներկայ սեպտ. 26-ին կայացրած որոշումը պէտք է համարել ապօրինի։

## Հարց

5) Կանոնաւոր է խորհրդի անդամների փոխանորդութիւնը։

## Պատասխան

5) Ընդունելով այն ղեկավարող սկզբունքները, որոնք արձանագրուած են հանգուցեալ Յովհաննէս Անանեանի ընծայագրի մէջ, և աչքի առաջ ունենալով ներկայ ղեկուցման առաջին կէտում յիշած մեր պատ-

ճառաբանութիւնները, մենք գտնում ենք փոխանորդութիւնը ըրծայագրով չթոյլարուած։

Եզրափակելով վերոյիշեալը, մենք գտնում ենք, որ պ. և. Սարգսեանը ամենայն իրաւամբ պէտք է համարուի տեսուչ դպրոցի՝ իր պաշտօնին յատուկ լիազօրութիւններով, իսկ նրա առաջարկած և խորհրդից հաստատած խոնմբը պաշտօնի հրաւիրուած։ իսկ ինչ վերաբերում է նորակաղմ խորհրդի սեպտ. 26-ի որոշման, նա պէտք է համարուի անկանօն և ապօրինի։

Նիկողայոս Քալանթարեան, Քետրոս Քալանթարեան, Սամսոն Յարութիւնեան, Արշակ Բարխուդարեան, Պողոս Դոլուխանեան, Յովհաննէս Սպէնդիարեան, Միքայէլ Աթարէգեան,

### ՀՆԱԴԱՄԱՍՏՈՒԹԻՒՆ Է, ԹԷՇ ԿԱՄԱԼԵՐԳՐՈՒԹԻՒՆ

Զարսանալի ժամանակներում ենք ապրում մենք, Դըտնը ըլուում են մարդիկ, որոնք լրջութիւնը, գիտութիւնը և բարեխողնութիւնը աւելորդ բան են դարձրել, իսկ փոխարէնը զարդարում են իրանց յանդգնութեամբ և աչքակապութեամբ։ Որքան միամիտ—եթէ չասեմ աւելին—պէտք է լինեն այդպիսիները, որ կարծում են, թէ բանիմաց հասարակութիւնը իրանց «Փօկուսները», որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ տգիտութեան, նեղ խելքի և անսահման համարձակութեան արգասիք, կընդունէ իրը ճշմարտութիւն։

Դուրս գալ հասարակութեան առաջ, մամուլի մէջ, խօսել մեծ ապլօմբով, երբեմն գիտնականի դիմակի տակ, դարձել է մի սովորական, բայց ցաւալի երկոյթ։ իսկ երբ վերցնում էք նրանց ասածից կեղծ կեղեց, քննադատութեան էք ենթարկում բովանդակութիւնը, մնում էք ապշած նրանց խոր տգիտութիւնից, տրամաբանութեան բացակայութիւնից։ Իբրև փայլուն փաստ ասածիս կարող են ծառայել, ի միջի այլոց, այն յարձակումները, որ կատարում են կատաղի, բայց անմիտ կերպով «Երկիր» լրագրի համարներում մի խումբ իրաւաբանների եզրակացութեան առիթով, որ նրանք տուել են չարաբաստիկ Յովհաննեան դպրոցում տիրապետող «նոր կարգերի» մասին։ Եւ ես եղել եմ այդ իրաւաբանների թւում, հետևապէս անկարող եմ լուսթեամբ անցնել։

Յիշեալ խնդրի մասին «Երկրի» № № 3 և 4-ում տպուել են 2 յօդուածներ. մէկը Սլաքի ստորագրութեամբ, իսկ միւսը՝ իրաւաբան Գ. Խատիսեանին է պատկանում: Առաջին յօդուածը լի է միմիայն հայհոյանքներով, տափակ սրախօսութիւններով, և եթէ կուզէք, նրա մէջ կայ փորձ նոյն իսկ ինսինուցիա անելու այն իրաւաբանների հասցէն, որոնք իրեկ մասնագէտներ պ. Ա. Անանեանի հրաւէրով տուել են իրանց եղրակացութիւնը ամենայն անաշառութեամբ յանձին իրանց մասնագիտական պարտաւորութեան, ամենայն կերպ աշխատել են մնալ օրեկտիւ հողի վրայ, հեռու ամենայն կուսակցական տեսակէտներից և կողմնակի հանգամանքներից: Ասսցէք խնդրեմ, որ քաղաքակիրթ, լուսաւոր հասարակութեան մէջ կարելի էր մի յատկապէս մասնագիտական եղրակացութեան համար, փոխանակ բննելու և քննադատելու միմիայն եղրակացութիւնը ըստ էութեան, ենթարկել քննութեան և դատապարտել մասնագէտների անձնաւորութիւնը, ունենալով. սոսկ մի նպատակ—ազգել խուժանի վրայ, որպէս զի մասնագիտական եղրակացութիւնը շրանայ նրա աչքերը: Այդ տեսակ յօդուածի միակ պատասխանը կը լինի մեր խորին զգուանքը:

Այժմ անցնում եմ պ. Խատիսեանի յօդուածին: Պ. Խատիսեանը թէև փորձում է քննադատել իրաւաբանական տեսակէտից յիշեալ եղրակացութիւնը, բայց կը կին, կարծես, ուզում է յետ չմնալ իր նախորդից—համարձակութեան նկատմամբ: Մեր ութ իրաւաբաններիս եղրակացութիւնը անուանում է «Քիւրօկրատիկ», յետամնաց մտածողութեան արդիւնք, պատճառարանութեան ձեւ քրէնով վերցրած կանցելիարիայից» (հրաշալի սրախօսութիւն...) և այլ համանման գորարներով նա զարգարում է իր յօդուածը: Թողնենք իրան, պ. Խատիսեանին, անտեղի, անմիտ խօսքերի կուտաշը, անցնենք նորաբողբոջ իրաւաբանի յօդուածին ըստ էութեան: Որքան ողորմիլի է այդ կողմից գիտնական տօդա հազած Խատիսեանը, ինչ հիսաւթափութիւն, երբ ծանօթանում էք նրա յայտնած մըտքերի հետ, որոնք մէկը միւսից խալ, մէկը միւսից անհիմն, հակաիրաւաբանական և հակատրամարանական են, եթէ այդ գրուածքը պատկանէր մի թերուս գիմնազիստի, չէինք զարմանալ, բայց երբ տեսնում ենք, որ այդ դուրս է եկել մի համալսարանաւարտ իրաւաբանի գրչից, չենք կարող ամենաքիչը չցաւել: Պ. Խատիսեանը իր յօդուածի սկզբում կտրուկ կերպով յայտնում է, որ ութ իրաւաբանների եղրակացութեան սխալ լինելը կասկածից դուրս է. աֆերիմ: բայց ինչպէս է նա պատճառարանում, հետաքրքիրն այդ է: Պ. Խատիսեանի

ասելով Յովսանեան գովրցի հին հոգաբարձութիւնը—հակառակ իրաւաբանների եղակացութեան—իրաւունք չունէր վարել ուսումնարանի գործերը իր լիազօրութիւնը վերջացնելուց յետոյ։ Ի միջի այլոց, նա իրաւունք չունէր ընտրել տեսուչ պ. Լ. Սարգսնեանին։

Այդ հարցը վճռելու համար, պ. Խատիսեանի կարծիքով, պիտք է իմանալ, որ դա «սահմանադրական» հարց է և դրան լուծելու համար պէտք է դիմել ոչ թէ Ռուսաստանի օրէնքներին ու կարդերին, այլ օտար, ուամկավարական օրէնադրութիւններին, ուր ընդունուած է, որ ժողովրդի ընտրեալները իրաւունք չունեն օգտուել ժողովրդի տուած իրաւունքներից աւելի երկար, քան այդ որոշուած է օրէնքի մէջ. յետոյ. պ. Խատիսեանի կարծիքով, նոր հոգաբարձուները իրաւունք ունէին հեռացնել պաշտօնից պ. Լ. Սարգսնեանին, որովհետեւ բոլոր «գեմօկրատիկ երկրներում ընդունուած է ամենալայն կերպով, որ երբ փոխուում է նախարարութիւնը, փոխուում են նաև պաշտօնեաները»։ Ամեն մի թէղիսը պ. Խատիսեանի սխալ է և անհիմ, թէ փաստային, թէ պատմական և թէ դիտական տեսակէտից։ Եթէ ի նկատի առնենք, որ այս բոլոր կոիւների պատճառը եղել է այն, որ հին հոգաբարձութիւնը տեսուչ է ընտրել պ. Լ. Սարգսնեանին, որի ընտրութիւնը անհաճելի է նրա հակառակորդներին, թէն հակառակորդները մինչև հիմա մի խօսք անգամ չեն ասել նրա մանկավարժական թերութիւնների մասին, և եթէ ի նկատի առնենք ևս այն, որ պ. Սարգսնեանը ընտրուել է տեսուչ մինչև յուլիսի 3. ը, երբ հին հոգաբարձութեան լիազօրութիւնը դեռ չէր վերջացել, դուրս կը գայ, որ հէնց իրա պ. Սարգսնեանի ընտրութիւնը եղել է օրինական։ Պ. Խատիսեանի սխալը գուցէ բացատրուի նրանով, որ նա իրան նեղութիւն չէ տուել ծանօթանալ գէթ գործի փաստային կողմի հետ։

Ոչ պակաս անհեթեթութիւն են ներկայացնում նրա մնացեալ պատճառաբանութիւնները կամ աւելի լաւ է ասել, անտեղի, փեռուն Փրազները։ Պ. Խատիսեան զանում է, որ Յովնանեան դպրոցի հոգաբարձական հարցը սահմանադրական հարց է և դրան լուծելու համար պէտք է դիմել «օտար դեմօկրատիկ երկրների օրէնսդրութեան»։ սոսկալի՛ շփոթութիւն սահմանադրութեան մասին։ Խնչպէս կարելի է Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը համարել սահմանադիր մարմին։ քանի որ նա ինքը ոչինչ չէ սահմանում և իրաւունք էլ չունի սահմանելու։ Նա հրաւիրուած է վարել դպրոցի գործնրը, դպրոցի հիմնադիր Յ. Անանեանի ընծայագրի սկզբունքներով,

հոգեսոր իշխանութեան ներքոյ և յարմարուելով տիրապետող օրէնքների հետ, ուրեմն, Յովիսանեան դպրոցի հոգաբարձութիւնը հանդիսանում է ոչ թէ սահմանադրական, այլ մի վարչական մարմին։ Սակայն պ. Խատիսեանը, տալով Յովիսանեան դպրոցին սահմանադիր մարմնի բնութիւն, գտնում է, որ հին հոգաբարձուները իրանց լիազօրութիւնը պէտք է շարունակեն միմիայն որոշած ժամանակամիջոցը (3 տարի), ինչպէս այդ կատարւում է ռահմանադրական երկրներում։ Բայց նա ուանում է, որ այն երկրներում, ուր տիրապետում են ուամկավարական սկզբունքներ, ուր օրէնքները սահմանում են ժողովրդի ընտրեալները, այն տեղերում էլ լիազօրութեան շրջանը խիստ կերպով կատարւում է միմիայն օրէնսդրական հիմնարկութիւնների վերաբերմաքր, որովհետև պարլամենտների, պալատների, բէյսխատրատի և այլ համանման հիմնարկութիւնների անդամները հրաւիրուած են, ի միջի այլոց, օրէնքներ սահմանել որոշ ժամանակամիջոցում, և երբ այդ ժամանակամիջոցը վերջանում է, հիմնարկութիւնները փակւում են մինչև նոր կազմը. այն, ինչ չէ կարողացել կատարել մի կազմ իր գործունէութեան ժամանակամիջոցում, կատարում է նոր կազմը յետագայ ժամանակամիջոցում։ Իսկ որովհետև կեանքը կանգ չէ առնում, նա ընթանում է, և նոյն իսկ այդ ուամկավարական երկրներում հին կարգերը օրէնսդրական տեսակէտից մնում են պարտադիր, մինչև նրանց փոխելը, ընդունուած եղանակով։ Եւ դուք, պ. Խատիսեան, չէք կարող ցոյց տալ ոչ Անգլիայում, ուր ընտրովի են, օրինակ՝ դատաւորները, կամ մի ուրիշ երկիր, ուր զանազան պաշտօնեաներ նոյնպէս ընտրովի են, որ ընտրովի պաշտօնեաները անմիջապէս հեռանան իրանց պաշտօններից, երբ իրանց ժամանակամիջոցը լրանում է, առանց յանձնելու նորերին։ Թողնել պաշտօնը մինչև նորի ստանձնելը, այդ տեսակ պահնաջը անբնական է և արամարանութիւնից զուրկ։ Երևակայէցէք, որ ինչ-ինչ պատճառներով նորի պաշտօն ստանձնելը ուշանում է. օրինակ ընտրովի հոգաբարձուների, ընտրովի դատաւորի, ընտրովի բժիշկի և այլն, և այն. և մթէ դուք կարող էք ենթադրել, որ հին հոգաբարձութեան յանձնած դպրոցները, հին դատաւորներին յանձնած դատարանները, հին բժիշկներին յանձնած հիւանդանոցները պէտք է փակուեն, որովհետև նրանց լիազօրութեան ժամանակամիջոցը լրացել է։ Տեսնում էք, թէ ինչ արսուրդի է համարում ձեր հայեացակէտը։ Դուք ի հաստատութիւն ձեր մտքի—բերում էք մի օրինակ. դեմոկրատիկ երկրներում ընդունուած է՝ երբ փոխելում է նախարարութիւնը,

փոխւում են նաև պաշտօնեաները։ Կրկին ցաւալի թիւրիմացութիւն ձեր կողմից։ Զէ կարելի աւելի պարզ ասել և ցոյց տալ, թէ այդ մը զմուկրատիկ երկիրն է, ուր նախարարութեան հետ փոխւում են նաև պաշտօնեաները։ օրինակ—լուսաւորութեան նոր նախարարի հետ փոխւում են նրա դիւնատան ծառայողները, փոխում են բարձրագոյն, միջնակարգ և մնացեալ դպրոցների և այլ ուսումնական հիմնարկութիւնների պրօֆէսօրները, վերատեսուչները, տեսուչները, ուսուցիչները և ուրիշ զանազան պաշտօնեաներ, այդ տեսակ երկիր երկրագնդի վրայ չկայ. իսկ եթէ նա տեղ է գտել զանազան անհատների ֆանտազիայում, այդ մասին մենք ասելիք չունենք. Բոլոր սահմանադրական երկրներում, ուր կան պատասխանատու նախարարութիւններ, նախարարները կազմելով մի այսպէս ասած նախարարսկան կարինէտ, ներկայացնում է մի որոշ ուղղութիւն և ամեն մի ուղղութեան սկզբունքները աշխատում է մտցնել իրան յանձնած զրջանում, բայց դրա համար նրանք իսկոյն չեն վոնդում հին պաշտօնեաներին. մասնակի փոփխութիւններ կատարում են, բայց դա մի պարտաւորական և ընդունուած կանօն չէ. Պ. Խատիսեանի տարօրինակ դատողութեան պսակը պէտք է համարել նրա կրուածքի այն մասը, որի մէջ նա յայտնում է, թէ «պ. Ա. Անանեանը բոլորովին ապօրինաբար է իրան յատկացնում հոգաբարձուի կոչումը. և գիտէք, ընթերցող, ինչժ. որովհետև Ա. Անանեանը դպրոցի հիմնադիր Յ. Անանեանի տոհմից չէ Խատիսեանի ասելով։ Ի՞նչ միամտութիւն, ի՞նչ խորը տգիտութիւն—նոյն իսկ ամենատարական հարցերում։ Հանգուցեալ Յ. Անանեանի ընծայագի մէջ՝ 6-րդ կէտում ասուած է, որ նրա տոհմի աւագը, արական սելից, պէտք է լինի անփոփոխ հոգաբարձու դպրոցի։ Գերմանիայի և մնացեալ ըոլոր կուլտուրական երկրների օրէնսդրութիւնները ընդունում են, որ տոհմը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արենակցական կերպով կապուած արական և իգական սեպին պատկանող անձանց մի համախմբում, որոնք ծագում են մի նախահայրից. այդ կապը համարեա բոլոր պետութիւններում իրաւունք է տալիս տիրելու ժառանգական գոյք, կալուածք։ Այդպէս են որոշում տոհմը իրաւագիտութիւնը և տիրապետող օրէնքները։ Բոլորովին համանման կերպով տոհմի էութիւնը որոշում են և Ռուսաստանի քաղաքացիական օրէնքները, որոնք պարունակում են Խ-րդ հատորի 1-ին մաս. յօդ. 196, 112 և 1113։ Եթէ ի նկատի առնենք, որ պ. Ա. Անանեանը դպրոցի հիմնադրի հարազատ եղացըն է, որ եղբայրներ համարւում են երկրորդ աստիճանի արենակցական բարեկամ-չուկտեմբեր, 1906.

ները, որ հիմնադրից արական սեռի անմիջական ժառանգներ չեն մնացել և վերջապէս, որ այդ տոնմի մէջ աւագագոյնը արական սեռի՝ է պ. Ա. Անանեանը, չէ կարելի չգալ այն խորը համոզման, որ պ. Ա. Անանեանը ամենայն իրաւամբ պէտք է համարուի օրինական հոգս բարձու Յովանեան դպրոցի, եթէ մինչև անգամ չասենք այն, որ նա միենոյն ժամանակ հաստատուած է Հայոց Կաթողիկոսի կօնդակով այդ կոչման մէջ։

Ահա թէ ինչ անհեթեթութիւններ, անմտութիւններ են պարունակում պ. Խատիսեանի յօդուածի մէջ։ Սակայն, չնայած նրա անպատրաստականութեան, նրա անտեղեակ լինելուն շօշափած հարցերում, այնուամենայնիւ այդ արգելք չէ եղել, որ նա դուրս գայ և «Երկրի» էջերում անսանձ կերպով քննադատի ուրբիշներին։

Այդ քննադատութիւն չէ, այլ կատակերգութիւն։

Այնտեղ, ուր հարկաւոր է մտքի ոյժ, գիտական պատրաստականութիւն, այնտեղ լոկ ֆրազները կարող են միմիշայն ակամայ ժպիտ յարուցել։

### Սամնոն Յարութիւնեանց

Յովսանեան դպրոցի դէպքը դարձել է, ինչպէս կը աեմնէք ներքե, և տեղական ոռու մամուլի քննութեան առարկայի Այդ մամուլի օրդաններից մին՝ «Տիֆլիս» (№ 12) հետեւել յօդուածն է նուիրել։

«Տիֆլիս»-ի էջերում դետեղուած էին քանի մի տեղեկութիւններ Թիֆլիսի հայոց իդական ողբօդիմազիայի—Յովսանեան դպրոցի իրերի դրութեան մասին։

Յիշեալ դպրոցի հոգաբարձութեան նորընտիր և անդամները հասցրին գործը այն դրութեան, որ ծերունազարդ Կաթողիկոսը էջմիածնի կամարիլայի ազգեցութեան տակ, կամարիլայի, որ իր հերթին դեկաֆարւում էր «ամենակարող» կուսացկութեան ձեռքով, հրամայել է առայժմ կողմնակի կերպով հեռացնել տեսչական պաշտօնից պ. Լ. Սարգսեանին, հէնց նոյն Սարգսեանին, որին նա ընդամենը երկու-երեք ամիս առաջ առանձին կօնդակով ողջունեց իբրև աւելի արժանաւոր ընտրեալի։

Ի՞նչ պատահեց։

Լ. Սարգսեանը «ամենակարող» կուսակցութեան անդամ չէ։ Նա անզգուշութիւն, կամ համարձակութիւն ունեցաւ հասարակութեան առաջ, իր ձեռքով խմբագրուող «Մուրճ» ամ-

առգրում և ուրիշ թերթերում, քննութեան - ենթարկել այդ կուսակցութեան լիդերների գործունէութիւնը և սկզբունքները: Եւ փոխանակ ստանալու իրեւ պատասխան գրական քանակութեան, համոզուած կոիւ, նա ստանում է հալածանք, նենգութիւն, յամառ ինտրիգներ և վերջ ի վերջոյ «ամենակարող» հակառակորդներից թելադրած առաջարկութիւն—թողնել գործոց և ստանալ տարեկան ոռճիկը. թողնել գործոց, չնայած որ նա միաձայն ընտրուել է օրինաւորապէս գործող հոգաբարձական խորհրդից և հաստատուել է Կաթողիկոսի կօնդակով: Թողնել գործոց, ստանալ տարուայ ոռճիկը, չնայած որ ամբողջ հասարակութիւնը, նոյնիսկ հակառակորդները տեսնում են յանձին նրա արժանաւոր, կարող գործի—կրթութեան գործում: Ամբողջ գործը նրանումն է, որ Լ. Սարգսեանը այդ կուսակցութեան անդամներից չէ, քննադատում է նրա գործողութիւնները և դրա համար պէտք է պատժուի—նոյնիսկ չքաշուեցին յայտնել տեսչին արձակելու առիթով իրանց պատճառարանութեան մէջ չափ և սահմանի զգացմունքը կորցրած չորս հոգաբարձուները, Դրա անունն է բացարձակ կամայականութիւն և ապօրինութիւն, որ ոչնչով չեն զանազանուում այն ապօրինութիւնից, որի դէմ մաքառում են Ռուսաստանի լաւագոյն մարդիկ և—հէնց իրա ասելով—ինքն «ամենակարող» կուսակցութիւնը: Հայց յեղափոխական ֆրազիօգիւն դեռ յեղափոխական էութեան վկայ չէ:

Այլ որոգայթները, բանսարկութիւնները մի ամիս շարունակ մի քանի հարիւր երեխաների համար փակեցին ուսումնարանի դռները, փողոցում թողին նաև ուսուցիչներին, որոնք արդէն քննունուած լինելով դեռ սեպտեմբերի սկզբին պ. Սարգսեանից և հաստատուած հոգաբարձական խորհրդի սեպտեմբերի 14-ի նիստին (հին հոգաբարձուների և տեսչի  $\frac{4}{1/2}$  ձայնով ընդդէմ նոր հոգաբարձուների 4 ձայնի) այժմ մնացել են դպրոցի շուրջը, որովհետև արդէն ուշ է, իսկ «ամենակարող» կուռակցութիւնը «իր» տեսչի հետ միասին ուզում է ունենալ և «իր» ուսուցիչներին:

Եւ եթէ այդ ցաւալի դրութեան մէջ, որ ստեղծուեց գործից հեռու մնացած ուսուցիչների և վարժուհիների համար—մեղաւոր են խմբական շահերը և կուսակցական մասպարծութիւնը, որոնց զո՞ր են բերում իրաւոնքը եւ արդարութիւնը, բայց և ոչ պակաս մեղաւոր է և այն հանգամանքը, որ Էջմիածինը իր կոչման բարձրութեան վրայ չէ կանգնած, որ նա իւրաքանչիւր օր տալիս է հակասող դիրեկտիվներ, որ նա

տեղի է տալիս ոյժի առաջ, ոտանատակ տալով իրաւունքը, և անցնում է իր իշխանութեան սահմաններից:

Այդ «օօցիալիստները», որ մերժում են պ. և. Սարգսեանի առաջարկած իրաւագէտների միջնորդ դատարանը և որոնք յենուում են էջմիածնի ապօրինութիւնների, կրքի և նեխուած մթնոլորտի վրայ, և այդ բարձր հոգեորականութիւնը՝ որ հաշտուել է իր առաջուայ «թշնամու» հետ, դրանք բոլորը իսկապէս արժեն միմեանց:

Ի նկատի առնելով մեր բոլոր ասածները, դեռ սեպտեմբերի սկզբին պ. Սարգսեանից ընդունուած և նոյն սեպտեմբերի 14-ին հոգարարձական խորհրդի մեծամասնութեամբ հաստատուած և այժմ էջմիածնի քմահաճոյքով փողոցում մնացած ուսուցիչներին մնում է մի քան. — իրանց շահերի պաշտպանութեան համար դիմել օրինական միջոցների, պահանջներով վճարել տարեկան վճարը կամ թողնել ուսուցչական կազմում: Դա՛ ուսուցիչների իրաւունքն է, որպէս վարձական կաթէգորիայի իրաւունք. և միւնոյն է, թէ ով է ոտնահարում այդ իրաւունքը — հոգարարձական խորհուրդը, էջմիածինը, թէ մասնաւոր ձեռնարկող՝ մի վաճառական»:

### Էջմիածնից «Մշակին» գրում են.

«Հոկտեմբերի 2-ին, Սինօղը քննութեան առնելով Յովհնանեան դպրոցի հարցը, կայացրեց հետեւալ որոշումը.

«Սինօղիս ի նկատի առեալ, նախ՝ զի տեսուչ Յովհնանեան դպրոցի կեոն Սարգսեան օրինական կարգաւ ընտրեալ է ի ձեռն հոգարարձութեան, որոյ չե ևս էին անցեալ ժամանակ իրաւասութեան, զի չեին տակաւին ընտրեալ յայնժամ նոր հոգարարձուք, որք հաստատեցան միայն յանցելում սեպտեմբեր ամսեան\*), և ապա հաստատեալ է տեսուչն կօնդակաւ Նորին Սրբութեան ի 15 յուլիսի տարւոյս, թ. 864, ուրեմն ցվերջ այսր ուսումնական ամի, չիք հիմն ինչ օրինական արձակելոյ զնա ի պաշտամանէն. և երկրորդ՝ ապօրինի և հակառակ համարելով իմաստի կտակի հանգուցեալ Յովհնանու Յովհնանեան զմասնակցութիւն փոխանորդաց հոգարարձուաց ոմանց ի գումարման խորհրդոյ հոգարարձութեան, որ ի 26 սեպտեմբերի անցելոյ, վասն զի չիք ի կտակին յիշատակութիւն ինչ զփոխանորդաց, խողել ամնախոնարհ յայտարարութեամբ ի Նորին Սրբութենէ, զի հաճեսցի թողուլ ի պաշ-

\*.) Տեսչի անունով տրուտծ հ աստատութեան կոնդակը գրուած է յունիսի 27-ին, № 778.

առան գէթ վասն այսր ամի՞ զտեսուչ պ. Սարգսեան և զդասատուս, ընտրեալս ի նմանէ, իբրև զհաստատեալս օրինական կարգաւ պաշտօնեաս, և ի յուշածել նախագահի հոգաբարձութեան դպրոցին, եթէ ըստ կտակի հանգուցեալ հիմնադրի նորին հոգաբարձուաց չեն իրաւունք զիհազօրութիւնս իւրեանց յանձն առնելոյ փոխանորդաց, իսկ եթէ հոգաբարձուք բացակայեն յար ի քաղաքէն, պարտին հրաժարել ի պաշտամանցն և ի տեղի նոցա առնել ընտրութիւն նորոց հոգաբարձուաց, Եւ քանզի առ գժառութեանց որ ծագեալ են ի դպրոցին, մեծապէս առուժէ այն, զի ցայսօր ժամանակի չէ իսկ սկսեալ աւանդումն դասուց, հայցել առ այդ զփութաշնորհ տնօրէնութիւն նորին Յըրութեան»:

Այս որոշումը ներկայացուած է վեհ. Կաթողիկոսին, բայց գիւանատան մէջ ըստն դրած ինտրիգանները և կամարէլլան ամեն միջոց գործ են դնում, որ Կաթողիկոսը չհաստատէ ի հաճոյս ամենակարող «կուսակցութեան»:

Տեղական ուսւ մամուլն ես, ինչպէս ասացինք, յայտնեց իր կարծիքը Յովիանեան ուսումնարանի տեսչական հարցի մասն. «Տիֆլ. Տելեր», «Կավազսկօ Հիշնի», և «Տիֆլիս» պախարակեցին դաշնակցական հոգաբարձուների նեղուիրտ և ապօրէն ընթացքը. Դաշնակցութեան հրապարակական ջատագով բժ. Ալ. Խատիսեանը փորձեց փաստաբանել այդ «հզօր» կազմակերպութեան ընթացքը, խեղաթիւրելով փաստերը և անտեղի ճոռումաբան շեղումների դիմելով «Կավկ. Ջնինի» թերթում, որի խըմբագրութիւնը տպագրելով այդ բժշկի յօդուածը ծանօթութեան մէջ նկատել էր որ չի բաժանում յօդուածագրի պաշտպանած մտքերը. Ապա նոյն թերթը և 12-ի մէջ զետեղեց Ա. Շ. ստորագրութեամբ հետևեալ յօդուածը.

### Մաքառում կամայականութեան դէմ

Պ. Խատիսովի՝ «Երկու սկզբունքների պայքար», վերնագիրը կրող յօդուածում մենք ցաւելով չպահնք փոքր իշատէ լուրջ ու անաշառ գնահատութիւն այն իրողութիւնների, որոնցից կազմուեց Յովիանեան օրիորդաց ուսումնարանի տեսչական հարցը, մինչեւ այդ հարցը որ այնքան խոր կերպով յուզեց հայ ազգաբնակութեան հասարակական շրջանները արժանի էր աւելի խոհուն և անկուսակցական վերաբերմունքի քան այն, որ արտայայտեց պ. Խ.: Նա հէնց առաջին տողերից դուրս ե-

կաւ կուսակցութեան ջերմ պաշտպան և, իբրև այդպիսին, չկա-  
կողացաւ մնալ արդարամիտ և անաշառ դատաւոր այն վէճք  
մէջ, որի լուծումը նա ձեռք առաւ Ամենից զարմանալին այն  
է որ յօդուածի հեղինակը չկարողացաւ քննել և հասկանալ կող-  
մերի ընդհարման էութիւնը և, մի կողմը շեղուելով, սկսեց ճա-  
ռել այնպիսի առարկաների մասին, որոնք, ուղղակի յա-  
րաբերութիւն չունենալով գործի հետ, հեղինակին զրաւեցին  
դէպի միտինգային պերճախօսութեան ճանապարհը։ Այդպէս,  
երկու կողմերի մէջ բռնկուած բանակուիւը պ. Խ. ներկայացը-  
նում է իբրև երկու սկզբունքների երկու հակառակ հոսանքների  
պայքար. մի կողմից նոր, յանձին թէկուզ չորս ընտրեալների,  
որոնք պ. Խ. կարծիքով կոչուած են աւելի սրբել, այն ըոլորը  
ինչ որ հնացել է ու փտել և հնի աւերակների վրայ կառուցա-  
նել նոր բարեբախտութիւն Յամանեան ուսումնարի համար,  
իսկ միւս կողմից՝ պահպանողական, յետադէմ, որ պահպանում  
է պ. Սարգսեանին և այս վերջինից պահպանում Միտժամա-  
նակ չմերժելով այժմեան տեսչին անձնական յարգանք պ. Խ.  
իր մտքերի յետագայ շարահիւսութեան մէջ այնուամենայնիւ  
նրան դրաւ հասարակական գործիչի աննախանձելի դրութեան  
մէջ, ցոյց տալով որ իբր թէ նա նեցուկ է որոնում կղերական  
շրջաններում, ուստի արդարացի կերպով ենթարկւում «Թարմ  
փոթորկի կատաղի գրոհին», որ առաջ են բերել ըստ երևոյթին  
նախանձախնդիր ժողովրդական ներկայացուցիչները։ Այդպիսով  
դուրս է գալիս որ «ժողովրդի վսահութիւնը զրաւած» հոգա-  
բարձուները իրանց վրայ են վերցրել դպրոցի հոգատար բեֆոր-  
մատորների վիճ կոչումը և մուտք գործելով ուսումնարան, վճռել  
են նախ և առաջ ազատելնրան յետադէմ և պահպանողական կղե-  
րական տարրից յանձին Լեռն Սարգսեանի, Հարցը հէնց այդ կող-  
մից պարզաբանելու նպատակով պ. Խ. կիրառութեան է առել զե-  
մոկրատիական տերմինուրոգիայի ամբողջ բառարանը և վճռողա-  
բար յայտարարել թէ Շնոր բեֆիմը միշտ իրաւացի է, բանի որ  
նա ծնուել է ժողովրդական ձայնաւութեան արգանդից և ոչ մի  
միջնորդ դատաստան չի կարող փոփոխել նրա իշխող հրաւէ-  
րը... Այդ աստիճան անհամապատասխան գունաւորում տալով  
տխուր միջնադէպին, որ ամենուրեք յարուցեց հասարակական  
գայրոյթ, պ. Խ. չասաց ճշմարտութիւնը, որ միայն կարող էր  
լուծել վէճը պատշաճ անաշառութեամբ։ Սակայն այլ կերպ վա-  
րուել նա անկարող էր, որովհետև նա խօսում էր բերանով այն  
մարդկանց, որոնց վերագրել է ժողովրդական կամքի իսկական  
արտայայտիչների գերը, ուստի և չէր կարող հանդէս գալ մեր-  
կացնող կոպիտ կամայականութեան որ կատարուած էր Լ. Սար-

գտեանի նկատմամբ հէսց այդ «Ժողովրդական ընտրեալներից». այն ժամանակ նա ստիպուած կը լինէր գրելու՝ կամմայականութեան գէմ պայքարի մասին և ոչ «Երկու սկզբունքների պայքարի» մասին, ինչպէս նա վերնագիր է գրել իր յօդուածին (№ 9 «Կաք. Հ.»), որ ամբողջապէս նուիրուած է Յովանանեան ուսումնարանի նոր հոգաբարձուների վարմունքը արդարացնելուն:

Ոչ, պ. Խ., Լևոն Սարգսեանը իդո՞ւ եղաւ կոպիտ, ոչ մի ըանով չքողարկուած անձնական ինտրիգի, որ ընդհանուր ոչինչ չունի ժողովրդի կամքի հետ, որի արտայայտիչ էք այնքան ձգուում գուրս բերել հապարարձական խորհրդի նոր կազմը: Հետաքրքիր է իմանանալ, թէ ինչպէս կը նայէիք քաղաքային դումայի նոր կազմի վարմունքին, եթէ վերջինս իր գործունչութեան առաջին քայլերից որոշէր հեռացնել ձեզ քաղաքային վարչութեան անդամի պաշտօնից մինչև ձեր պաշտօնավարական լիազօրութիւնների վերջանալը և այդպիսի ապօրէն որոշման իրեն պատճառաբանութիւն դուրս բերէր դէպի Զեղ դումայի մեծամասնութեան անձնական յարաբերութիւնները: Ես կարծում եմ որ այդպիսի որոշում առանց գանգատի չէր մնալ ուղղած քաղաքային գործերի նահանգական ատեանը և նոյնիսկ սենատ, որովհետև խօս չի կարելի հաշտուել «sic volo, sic jubeo» բըռնակալական սկզբունքի հետ, որ տեղ չի գտնում ոչ մի ժողովրդակամային ծրագրում: Միթէ այդ կերպ չվարուեցին պ. Սարգսեանի հետ նոր հոգաբարձուները, որոնք իրանց ներկայացուցչի բերանով խորհրդի պաշտօնական նիստում յայտնել են, որ նրանք նրա դէմ իբրև տեսչի ոչինչ չունին առարկելու, և դրանից յետոյ միթէ պարզ չէ ամեն մի չնախապաշարուած մարդու համար որ այդ պարոնների սկսած արշաւանքը տեսչի դէմ բացարուում է անձնական հաշիւներով, որ ծագել է լրագրական բանակուուից և տեսնուել նրոնց կողմից ուսումնարանական շինութեան մէջ զուտ ասիական վրիժառութեամբ, որ մերժում է որևէ գաղափարական աստաօ: Ել ինչ գործ ունի այստեղ երկու սկզբունքների պայքարը և ովկորուած բառախաղութիւնները «Ժողովրդական կամքի փութկոտ գրոհի, մըրքի մասին որ արմատախիլ է անում փթած ծառերը», և այլ ոչ պակաս էֆֆեկտաւոր այլաբանութիւններ, որոնց առաջը խնողել է իր յօդուածը պ. Խ.: Զպէտք է մոռանալ և այն որ Լևոն Սարգսեանի տուած հ աննիբալեան երթումը ծառայելու իր ժողովուրդի առաջադիմական հասարակական իդէալների, իրաւագրկութեան այն մոայլ ժամանակներից է սկսում,

երբ շատերը նրա ներկայ հալածողներից այնքան հեռու էին որևէ իդէալից:

Նրա ամբողջ հրապարակախօսութեան և մանկավարժական—հասարակական գործունէութեան ընթացքում հայ հասարակութիւնը սովորել է նրան տեսնել անփոփոխ կեանքի լուսաւոր և պրոգրեսիւ սկզբունքների ջերմ ջատագովիլ դերում, արդարութեան համար ջերմ մարտնչողի և ամեն տեսակ կամայականութեան և քմանաճոյքի, ուս կողմից և լինի այն, անհաշտ թշնամու դերում, դրանով էլ բացատրւում է նրա վըճռողական և անդարձ հեռանալը այն շրջաններից, որոնց գործունէութեան մէջ վերջին ժամանակներու նա ոչ առանց հիմքերի նկատեց անբարոյականացնող և հակահասարակական ձգտումներ: Եւ ահա ժողովրդական իրաւունքների ջատագովիլ բիւրեղանման մաքուր անուն ունեցող այդպիսի հասարակական գործիշն պ. Խ. խրաներ է կարդում այն բանի մասին, թէ հարկաւոր չէ յենուել հնացած օրէնքի դիլնած թերթերին, որոնք կը պատառուուեն «ժողովրդական կամքի կատաղի գրոհից»::

Բայց այդ դեռ քիչ է, պ. Խ. նրան զրկում է պաշտպաթիան տարրական միջոցներից, որոնց սովորաբար դիմում են շիտակ մտածող և գործող անձինք, երբ ցանկանում են հասարակական զատաստանով պարզել ընդհարուող կողմերի վիճելի հարցերը: Այդպէս վարուեց և պ. Սարգսեանը, դիմելով հասարակական կարծիքին և առաջարկելով իր հալածիչներին վատահանալ փոխադարձ վէճը միջնորդ դատարանի անաշառ վճռին: «Միջնորդ դատարանն: Նա այստեղ անտեղի է, ասում է պ. Խ., ինչպէս կարող է ժողովրդական ներկայացուցչութիւնը զատուել մեռած իշխանութեան մասցըդների հետա:

Թափանցէք այդ նախադասութիւնների իմաստի մէջ և դուք հազիւ թէ հնարաւորութիւն գտնէք որևէ գործադրութեան այս դէպքում, չսայելով այդ նախադասութիւնների արտաքինի ամբողջ վեհապանծութեանը և սեթևեթութեանը. մինչդեռ հարցը այնպէս էլ մնաց չպարզուած թէ ինչու ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքը պէտք է արգելք լինի առանձին անհատների և նոյն իսկ ամբողջ հասարակական խըմբերի մէջ ծագած վէճերը միջնորդ դատարանով լուծելու: Պ. Խ. անպէտք է համարում նաև իրաւաբանների մասնաժողովի վճռուը, որ այս քանի օրս յայտարարեց իր պատճառաբանած եղբակացութիւնը մամուլի մէջ, գտնելով, որ նա անզօր է ժողովրդի վստահութիւնը ներկայացնող անձանց իրաւունքի և հեղինակութեան առաջ: Այնպէս է դուրս գալիս որ

բաւական է միայն բախտ ունենալ եկեղեցական ծուխից ընտրուելու, որ իբրև «վստահութիւն գրաւած մարդիկ» ունենան զիսկրեցիօն իշխանութիւն ամեն տեսակ կամայականութիւն կատարելու:

Եւ այդպիսի' դատողութիւններից յետոյ, այդպիսի ապրով և ինքնահաւանութեամբ արտայայտուած, պ. Խատիսեանը խլում է սուրբ կուսակցական ռազմական աստուածներից և կարդում է Յովլանեան ուսումնարանի տհչական հարցի գորդեան հանգուցը:

## ԱՅՆԱՆ ՍՊՆԵՏՆԵՐԻՑ

(Նուիրում են Ն.-ին)

Արդեօք նորից երազներն են թափառում  
Սիրոյ յոյզերն հեռուից ուրախ ինձ կանչում.  
—Ոչ դա աշնան դժգոյն տերեներն են թափւում  
Սարից իջնող վտակները կարկաչում...:  
Ես լուսմ եմ հիացմունքի մի շըշուկ.  
Արդեօք նորից դռն ես հոգիս մեղմ յուզում:  
—Ոչ դա զիշերն է սիրաշունչ տրտմաշուք,  
Դա երկինքն է խորհրդաւոր, երազուն...:  
Ես ընկած եմ արձակ հովտում միայնակ,  
Տարուած չքնաղ երազներով ցիր ու ցան,  
Ինձ թւում է, որ եկել ես հերարձակ  
Գիշերի պէս խորհրդաւոր ու անձայն...:  
—Ոչ դա աշնան մերկ ծառերն են շառաչում  
Սարից իջնող վտակները կարկաչում...

Վահան Տէր-Գրիգորեան